

ՄՈՌԱՅՈՒՄԻ ԱՍՏՈՒՄԻ

Իրանական լեզենդա

Վ. ՎԷՆԴՏԻ

I

Հինդու-Վուշի լեռներից դանդաղ շարժւում էր կարաւանը՝ դիմելով դէպի հիւսիս-արեւելք:

Նա անցաւ Իրանի բարձունքներից, ուր օդը ջինջ է և մաքուր, ուր լոյսն ու ստուերը նրբութեամբ որոշում են տեսարանի ամեն մի մասը, ուր երկինքն այնպէս պայծառ է և թափանցիկ, որ, կարծես երևում է անհուն եթերքը... Նա անցաւ ամայի անապատների միջով, ուր փոթորիկը բուռն ուժգնութեամբ, կատաղի պտոյտներով բարձրացնում էր աւազի կոյտերը, ցրւում, պտոյտ-պտոյտ անում և վայրագ աղմուկով այս կողմ այն կողմ ձգում, ասես, ուզում էր ցրուել հաւասարել ամեն բան իր ճանապարհի վրայ, կարծես, ճիգ էր թափում անսահման աւազների մէջ չալտեկ ուղտերի միակերպ տատանուող կարաւանը, որ հլու՝ անմռունչ տոկունութեամբ կտրում էր իր երկար ճանապարհը: Նա անցաւ եւ ճահիճների միջով եւ՛ անբնակ տեղերով, եւ՛ ծաղկազարդ դաշտերով, որոնք լի էին աշխարհիս ամենափառթամ վարդերի բուրմունքով, որ երգել են Պարսկաստանի, Արաբիայի և Հնդկաստանի բանաստեղծները:

Կարաւանը շարժւում էր Շատ իւլ-Արաբի ավերով դէպի Կօկանդ—Նախնի Ֆերգանի վայրերը, որոնք ընկնում են Պամիրի Բէլուդդաղի և Ղարաթէջինի միջև, այնտեղ, ուր հոսում է Եաքսարտը:

Վերջապէս, ահա նա հասաւ Շառուգի հովիտը, որ Ամու-Դարիայի վտակն է և հոսում է Բադախշանի միջով՝ սկիզբն

առնելով Պարօպինազի շղթայից:

Հովիտը հարուստ է ճոխ բուսականութեամբ, և գետակներն ու առուակները ցանցի պէս ծածկել են նրան: Այս դաւարագեղ վայրը լի է մի այնպիսի բուրմունքով, որ մարդու խելքը գնում է. իսկ պտղատու ծառերը, պտտուտակները և խիտ թփերը ծածկում են նրա բոլոր թումբերն ու բլուրները: Այստեղ հնչում է սոխակի անընդհատ դայլայլիկը, որին ներդաշնակ է տերևների և ծաղիկների շրջիւնը, թռչունների ճըռուռողիւնը և օդի մէջ վխտացող անթիւ, խայտառդէտ բզէզների ազտգոցը:

Քիարվան-բաշիի նշանով ճանապարհորդներն այստեղ կանգ առան գիշերելու: Կարաւանը տեղաւորուեց մի բլրի մօտ, որի վրայից գոչգոչալով հովիտն էր իջնում մի առուակ՝ չուրջը խիտ թփեր:

Վրայ հասաւ գիշերը: Ընթրելուց և աղօթելուց յետոյ բոլորը տեղաւորուեցին քնելու: Միայն պատանի Պալուարտէսը՝ չնայելով որ յոգնած էր, չէր կարողանում քնել: Նրան չէին թողնում քնելու և ոսկեշող աստղերը, և փայլուն լուսինը, որի պայծառ եղջիւրը պսպղում էր երկնակամարի վրայ, եւ սոխակների անվերջ զիւ դայլայլիկը:

Պատանին վեր կացաւ և գնաց թափառելու. նա գնաց առուի ուղղութեամբ և, սայթաքելով, ձեռքը մացառների ն գցելով, սկսեց բարձրանալ բլուրը:

Այստեղ դժուարութեամբ անցնելով վայրի՝ խիտ մացառների միջով, նա յանկարծ կանգ առաւ...

Նա իր առաջ տեսաւ մի քարայր, որ պատած էր փշատերև բաղեղով և ծածկուած սպիտակ ծաղիկներով սփռուած ծառերի յետևը: Մուտքի մօտ ժանգոտած շղթայով կախուած էին խնկամաններ: Այստեղ ամեն ինչ վայրի էր. ամեն ինչ ծածկուած էր բոյսերով, և ամեն ինչ հաստատում էր, որ վաղուց է, ինչ այստեղ մարդ ոտք չի դրել:

Շուրջը բուսած ծառերի ճիւղերի արանքով թափանցեց լուսնի ճառագայթը և ընկաւ մի քարեայ արձանի վրայ, որ բարձրանում էր քարայրի վերևը: Պատանին վեր բարձրացրեց աչքերը. նրան յանկարծակի պաշարեց երկիւղի և չփոթմունքի մի ակամայ զգացմունք, և նա ծունկ չոգեց:

Նրբ վեր կացաւ, սնոտի բարեպաշտութիւնից դրդուած՝

կրակ արեց և կուռքի առաջ վառեց նրա վաղուց հանգած կանթեղները:

Յանկարծ նրան թուաց, թէ նա լսում է մի տարօրինակ, անորոշ շնչիւն, որից նա ցնցուեց... Եւ պատանուն թուաց, որ քարեայ արձանը գլուխը դարձրեց դէպի նրան. —

«Նա կլարձատրեմ քեզ, ով մահկանացու, — հնչեց որոշ, միևնոյն ժամանակ խուլ, ասեա՛ խորքից դուրս եկող ձայնը. — ես քեզ առատ կլարձատրեմ քո բերած զոհի, այդ վառուող խնկամանների համար, որոնք նորից դէպի ինձ են ծխում կընդունվի բուրալից ծուխը: Վաղուց է, որ նրանք հանգած էին և չէին վառուում:

Պալուարտէսը ցնցուեց.

— Ասա՛ ինձ, աստուած, — աչքերը դող ի դող արձանին ուղղելով՝ ասաց նա. — ասա՛ ինձ, ի՞նչ տարերքի հրամանատար ես, և ինչո՞ւ այսփեղ՝ քո շուրջը՝ ամեն ինչ ծածկուած է վայրի բոյսերով. ինչո՞ւ ամեն ինչ մոռացուած է, և չկայ նոյն իսկ մի շաւիղ, որ առաջնորդէր դէպի քո գահոյքը: Փշատերև մացառներն ամեն կողմից փակել են ճանապարհը:

Հնչեց արձանի խուլ, միակերպ ձայնը. —

«Նա սրտի մաքրութեան և բանաստեղծական անհոգ ստեղծագործութեան աստուածն եմ...»

«Վաղուց է, շատ վաղուց, որ ոչ ոք ինձ մօտ չի գալիս, ծունկ չի չոգում իմ առաջ՝ կրօնական ջերմեռանդ հիացմունքով վերացած: Նա այլ ևս չեմ լսում ո՛չ ջերմ խնդրուածք, ո՛չ գոհացողական մաղթանք: Վաղուց է, ես չեմ տեսել մարդկային հայեացք լի գողգոթուն յուսով, որ՝ գիմելով ինձ, հայցէր սրբազան կարեկցութիւն, որոնէր իմ գթութիւնը:

«Դարեր անցան այն օրերից, երբ վաղեմի սովորութեան համաձայն՝ ինձ նուէր էին բերում գարնան առաջին ծաղիկները, որոնցով մանուկները՝ խումբ-խումբ դէպի ինձ վազելով, սփռում էին պատուանդանս և սրբավայրիս մուտքը: Վաղուց անցել է այն ժամանակը, երբ ամեն ամսավերջին, հէնց որ երկնակամարի վրայ շողշողում էր առաջին աստղը, քաղաքիս շուրջը խմբուում էին բանաստեղծները և երաժիշտները: Այստեղ երգում էին օրհներգ և տաղեր. լսում էր լարերի և սրինգների ձայնը: Այստեղ, այս բաղեղների տակ ժողովրդական աւանդութիւններից հիւսում էին յանգաւոր բանաստեղծական երգեր. իսկ երբ վրայ էր հասնում գիշերը, ջահել աղջիկները

գալիս էին իմ կանթեղները վառելու: Այստեղ, ինչ մօտ էին գալիս, ինչպէս այդ պահանջում էր շատ սերունդներ ու դարեր տեսած վաղեմի սովորութիւնը, սիրահարները իրանց անդրանիկ համբոյրից յետոյ և ինչ նուէր էին բերում սպիտակ ծաղիկներից հիւսած պսակ...

Ընկ այժմ... երգի ձայնն արդէն լռեց շատ վաղուց՝ անցեալի մթին հեռաւորութեան մէջ—և շուրջս չկայ ոչ ծաղիկ, ոչ կայտառ մանուկներ, ոչ ժպիտ, որին ծնում է սիրոյ առաջին երջանկութիւնը,—այնպէս վաղուց է, որ չեմ տեսնում իմ քուրմերն ինչ երեսի վրայ թողին, իմ խնկամանները հանգան: Ինչ մոռացան... ես մնացի մեն-մենակ:

Ընկ եղար առաջինը, որ դարձեալ վառեցիր այդ կանթեղները, և ես կվարձատրեմ քեզ... Մի տերևիկ պոկի՛ր այդ ծակող բաղեղից, որ բարձրանալով այրի ժայռերի վրայով, պատում է իմ պատուանդանը. ես նրան կտամ հրաշալի յատուկ թիւն: Պահի՛ր նրան միշտ քեզ մօտ. կախի՛ր քո պարանոցից ոսկէ շղթայով և դի՛ր ազատ քարից շինուած մեղալիոնի մէջ: Այդ թալիսմանը իմ ներշնչած դիւթական զօրութեամբ կվառէ, կբարբոքէ քո սրտի մէջ անարատ սիրոյ զգացմունք և երգեր յօրինելու հրաշալի ձիրք, որ քո ամեն մի անկեղծ և սուրբ զգացմունքին և ամեն մի կենդանի տպաւորութեանը կտայ ներշնչուած բանաստեղծական ձև և արտայայտութիւն:

Ընկ դու, երբ նորից ծաղկի գարունը, բեր ինչ համար նրա անդրանիկ ծաղիկները, եթէ կուզես երախտահատոյց լինել:

Պալուարտէսը բաղեղի մի տերև փրցնելով, դրեց կրծքի վրայ: Նա ծունկ չոգեց չնջելով գոհացողական մաղթանքի խօսքերը, և երբ հեռանում էր, նրան թուաց, որ աստուծոյ արձանը իր քարեայ գլխի շարժումով հրաժեշտ էր տալիս նրան:

Հէնց որ արեւը ծագեց, Պալուարտէսը նորից բարձրացաւ բլուրը և տապարով թփերի մէջ չաւիղ բանալով դէպի կուղքի կացարանը, սփռեց նրան հովտից ժողոված ամենալաւ ծաղիկներով:

Հետեւեալ օրը կարաւանը շարունակեց իր ճանապարհը դէպի հիւսիս արևելք:

II

Անցաւ մի տարուց աւելի: Պամիրի սարահարթի վրայով

նորից անցաւ կարաւանը:

Նա անցաւ Ամու-Ռարիայի ջրառատ և եղեգնուտ հովտի մօտով: Նա անցաւ այն վայրերը, ուր երբեմն պատերազմել էր Շամիրամը, որտեղից երբեմն անցել էր իր աշխարհակալ բանակով հոյակաւոր Աղէքսանդր Մակեդոնացին, և որտեղ հին-հին աւանդութիւնների համեմատ, արիական ցեղի առաջին թագաւորն եղել էր Զրադաշտը, որ ստեղծեց այստեղ Զենդ-Ավեստան— Վենդանի խօսքը:

Սև ահա ճանապարհորդների առաջ նորից տարածոււմ է Բադախշանը իր մարգագետիններով և փարթամ բուսականութեամբ և հորիզոնի վրայ արդէն օձի պէս գալարոււմ է արծաթափայլ, արագահոս Շառուգը:

Գարունը նոր էր բացուել:

Կարաւանը տեղաւորուեց բլրի մօտ՝ առաջուայ տեղը:

Պուրուարտէսը՝ հաւատարիմ իր ուխտին, հովտից բերեց գարնան առաջին ծաղիկները, զարդարեց քարեայ արձանի պատուանդանը և էլի վառեց խնկամանները՝ լցնելով նրանց մէջ արևելքի ամենալաւ, անուշաբոյր խնկերը:

Այստեղ, այրի մամուլատ պատերը ծածկող բաղեղի մէջ, երբ երկնակամարի վրայ հանգաւ վերջալոյսը, իր կիթառի ներդաշնակութեամբ նա երգեց յաղթական, գոհացողական օրհներգ Անմեղութեան և Բանաստեղծութեան աստծուն:

III

Անցաւ էլի մի քանի տարի... Շառուգի հովտում՝ բլրի մօտ դարձեալ կանգ առաւ յոգնած կարաւանը:

Վրայ հասաւ գիշերը, և երկնակամարի վրայ փայլեցին առկայծող աստղերը...

Հէնց որ բոլորը պառկեցին հանգստանալու, մի ուրուական սկսեց թփերի և կոշտերի վրայով բարձրանալ բլուրը— այնտեղ, ուր կանգուն էր աստուծոյ քարեայ արձանը և բաղեղով պատած քարայրը:

Այդ ուրուականը Պալուարտէսն էր:

Այն շաւիղը, որ նա վայրի թփերի միջով բացել էր դէպի քարայրը, նորից ծածկուել էր կանաչով և անհետացել էր:

Պալուարտէսը գլուխը քարշ էր արել, երբ անմուռն կանգնեց արձանի առաջ:

Նա իր վզից հանեց ոսկէ շղթան, որից կախ էր արած

թափամանը, և, դնելով արձանի պատուանդանի վրայ, ծունկ չոգեց...

Մինչ այս-մինչ այն մուժ ամպերը պատեցին երկնակամարը, կուտակուեցին նրա զենիթի վրայ և, իբրև մի սև օթոց, ծածկեցին լուսնի ոսկեղջիւրը:

Պալուարտէսը՝ չհամարձակուելով աչքերը վեր բարձրացնել, ահը սրտում չնշում էր.

— Մեծագոր աստուած, քո հրաշալի թափամանը ես յետ բերի քեզ: Ա՛ռ. և հանիր իմ սրտից այն ձիւքը, որ ինձ ներշնչեց քո վսեմ զօրութիւնը... Հոգիս լի էր անձնուէր սիրով. ես անսահման հաւատ ունէի դէպի մարդիկ և դէպի երջանկութիւնը. սակայն ես խաբուած էի իմ ամենանուիրական ձեռնարկների և յոյսերի մէջ: Եւ այս տարիների ընթացքում կեանքս լի էր հոգեկան դառն տանջանքներով:

«Նս երգեր հիւսեցի լի բանաստեղծական աւիւնով և երգում էի կիթառիս ներդաշնակութեամբ. սակայն ոչ ո՛ք չհասկացաւ, ոչ ո՛ք չըմբռնեց իմ տաղերը, որ բղխում էին քեզանով ներշնչուած սրտիցս. ոչ ոք չըմբռնեց ոչ նրանց իմաստը և ոչ զգացմունքի խորութիւնը:

«Կեանքի ձախողութիւնների և հիասթափութեան մէջ ինձ երկար մխիթարում և սիրտ էր տալիս ստեղծագործութեան հզօր երջանկութիւնը, որ մի հմայիչ ոյժ ունի հաշտեցնելու մարդուն՝ առօրեայ մանր յուզմունքների և անպտուղ կորած ջանքերի վշտի հետ:

«Բայց ես օտար էի չրջապատողներիս համար, և ինքս էլ սկսեցի քիչ-քիչ խոյս տալ մարդկանցից, ինքս սկսեցի հոգով աւելի ու աւելի հեռանալ այն մարդկանցից, որոնց մի ժամանակ համարում էի մերձակոր, սակայն որոնց չըմանում արձագանք չէր գտնում իմ վերածնած սիրտս:

«Տարէցտարի ես զգում էի, ինձ նմանների խմբի մէջ ես միայնակ եմ: Նւ երբ ես սիրում էի հոգուս բոլոր զօրութեամբ, միև նոյն ժամանակ տեսնում էի, որ իմ բուռն սէրս չի զարթեցնում արձագանք, ինձ թւում էր, թէ ես այլ ևս սիրել իսկ չէի կարող, որովհետև իմ և իմ սիրոյ առարկայի՝ ինչպէս նաև ամենքի մէջ անդունդ կար: Եւ հէնց այդ ժամանակուանից անտանելի յուսահատութիւնը պաշարում էր իմ սիրտը, որովհետև հէնց այդ ժամից ես զգում էի իմ միայնութեան դառն կսկիծը:

«Եւ այն ժամանակ ցանկանում էի դարձնալ լինել Խոյն-
պէս, ինչպէս էի երբեմն, այս կանթեղներն առաջին անգամ
վառելուց առաջ... Իմ մէջ հանգչում է ապրելու տենչանքը...
ինձ համար անտանելի ծանր է իմ վսեմ միայնութիւնը:

«Ե՛ւ երգերս, եւ ստեղծագործող հանճարս, եւ անձնա-
զոհ սիրոյ ունայն զգացումս կորցնում էին ինձ համար իրանց
խակական իմաստը այն բողբոջին, երբ ես զգում էի իմ անել
միայնութիւնը: Ո՛ւմ համար երգեմ իմ երգերը: Այս բանաս-
տեղծութիւնը, որ դու դրիր իմ սրտում, չափազանց սուրբ է
և վեհ, որ մերձենայ այն կեանքին, որով ապրում են ինձ շրջա-
պատողները:

«Ա՛ռ, մոռ ինձանից, ո՛վ աստուած, քո հրաշալի շնորհը,
հանիր նրան մենաւոր սրտից.— իսկ ես կփշրեմ կիթաւս, իմ
սքանչելի ցնորքների և վառ երազների ընկերը, այս ամբա-
կուռ պատուանդանի վրայ:

Պալուարտէսը լռեց: Կարճատեւ ծանր մտածմունքից յե-
տոյ վեր բարձրացրեց տենդային փայլով վառուած աչքերը և
ասաց.

—Սօ գիտեմ, ինչո՛ւ քեզ թողին հեռացան քո քուրմերը.
ինչո՛ւ հանգան կանթեղներդ և ինչո՛ւ վայրի բոյսերը ծածկե-
ցին երբեմն նուիրական սրբավայրը... Սօ հասկացայ, ո՛վ հը-
զօր աստուած, ինչո՛ւ մարդիկ քեզ մոռացան: Դու այլ ևս հար-
կաւոր չէիր...Ձէ՛ որ մահկանացուների աստուածներն էլ մա-
հացու են:

Պալուարտէսն իր յանդուգն խօսքերից սարսափած, դող
ի դող աչքերը վեր բարձրացրեց՝ այնտեղից ցատումն սպա-
սելով:

Քարեայ արձանի բարձրութիւնից նրան էին նայում եր-
կու կենդանի վառ աչքեր, որոնք ցնցեցին նրան. բայց նրանց
հայեացքը անդ չէր, աւելի հեզ էր և թախծալի...

—Խաղաղութիւն ընդ քեզ, ո՛վ մահկանացու. գնա. ես առ-
նում եմ քեզանից քեզ արուած շնորհը: Ջարդիր կիթաւդ,—
լսուեց մոռացուած աստուծոյ ձայնը:

Պալուարտէսը կիթաւը խփեց պատուանդանին, և նա
փշուր-փշուր եղաւ: Լսուեց նրա վերջին անգամ տատանուող
լարերի աղիողորմ հեծեծանքը գիշերուայ մթութեան մէջ և...
լռեց. ընդմիջտ լռեց...

Պատանին դողդոջուն ձեռքերով բռնեց իր այրուող գլուխը.

— Թոյլ տո՛ւր, ս'վ աստուած, քո խղճալի ստրուկին՝ վերջին անգամ վառելու այս կանթեղներն ու խնկամանները. Թոյլ տո՛ւր ծաղիկներով սփռեմ քո սրբավայրը, — բացականչեց նա նորից ծունկ չոգելով:

— Հարկաւոր չէ, — լսուեց վերեւից շշուկը, և նրան թուաց, իբր թէ քամին կրկնեց այդ շշուկը և քչեց-տարաւ դէպի ցած՝ բարձր խոտի ալեծածան մակերևոյթի և գետափին բուսած եղէգնի վրայով, հասցնելով պատահած թփին և դալարագեղ հովտի բոլոր ծաղիկներին:

Տոգայն լուսինը սահող ամպի տակից դուրս գալով՝ նորից փայլեց բարձր երկնակամարի վրայ և լուսաւորեց քնաթաթախ կարաւանը, որ նեղքը խաղաղ հանգստանում էր հովտի մառախուղի մէջ:

Իբր Պալուարտէսը շուռ եկաւ, որ վերջին հայեացքը ձգէ մոռացուած աստուծոյ քարեայ արձանին, նրա տեղում տեսաւ միայն քարերի մի կոյտ. իսկ բլրի վրայից վեր էր ամբառնում լուսապայծառ մի ամպ, որ հետզհետէ ցրուելով՝ ցնդեց-կորաւ եթերային հեռաստանում...

Պալուարտէսը դեռ երկար կանգնած էր բլրի գագաթների վրայ՝ հայեացքն ուղղած աստղազարդ երկնքի խորքը... բայց նրա աչքերում հանգած էր առաջուայ կայծը, և սառած էր հայեացքը...

Թարգմ. Զ. Զ.